

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՐՎԵՍՏԻ ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Posted on February 3, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Անուշ Գասպարյան, «Ծիլ» համայնք, ՀՀ, 26 հունվար 2024

Այս տարին հոբելյանական է. նշում ենք հայ մեծանուն բեմագիր (սցենարիստ), նկարիչ, շարժարուեստի բեմադրիչ (կինոռեժիսոր), հիասքանչ (ֆանտաստիկ) արվեստագետ Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակը: Թեև կենդանության օրոք դժվարությունները հետապնդել են նրան, ըստ արժանվույն չի գնահատվել, բայց դա երբեք նկարչին հետ չի պահել իր սիրելի աշխատանքից, այն աշխատանքից, որում նա հրաշալի հաջողությունների էր հասնում, և որը կարևոր էր ոչ միայն Փարաջանով անձի գինը հասկանալու համար, այլև հայ արվեստի ներուժը չափելու: Այսօր, բարեբախտաբար, մեծ արվեստագետի անունը ծանոթ է ամեն հայի, նրա մասին խոսում են ոչ միայն Հայաստանում, այլև երկրից դուրս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի` Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025 թվականների օրացույցում ընդգրկված է նաև Փարաջանովի 100-ամյակը, և ով, եթե ոչ մենք` հայերս, պետք է մեզ վրա վերցնենք այս համաշխարհային տոնը նշելու, աշխարհին Փարաջանովի գույները նորովի ներկայացնելու պարտականությունը:

Անչափ շատ են կազմակերպված միջոցառումները, և դրանք շարունակվում են: Ստեղծվել է հանձնաժողով, որը ամբողջ տարվա ընթացքում Փարաջանովի շունչը թարմ է պահելու ոչ միայն այստեղ` Հայաստանի Հանրապետությունում, այլև երկրից դուրս: Մարդիկ հետաքրքրված են, մասնակցում են, ո՞վ չի լսել Փարաջանովի անունը:

Վարպետի հենց ծննդյան հարյուրամյակի օրը` հունվարի 9-ին, Երևանի «Կինոյի տան» մեջ տեղի ունեցավ նրա արձանի բացումը, որը շուտով իր տեղն է գտնելու Երևանի այգիներից մեկում: Շուտով արդեն նաև «Փարաջանովի արձանի մոտ» են հավաքվելու: Հեղինակը Արա Ալեքյանն է, նա աշխատում է երկաթով, և սա իր առաջին գործը չէ` կապված Փարաջանովի հետ: Հիմա նա կերտել է մեծ քանդակ` Փարաջանովը ամբողջ հասակով: Սա էր շատերի երազանքը, որ վերջապես իրականություն դարձավ: Բայց արի ու տես, որ մեր ժողովրդի մի մասը այստեղ էլ է բողոքելու, դժգոհելու առիթ գտել: Մենք այսպիսին ենք. եթե չկա` պահանջում ենք, եթե կա` անուն, պիտակ կպցնում: Բամբասում են, թե արձանում Փարաջանովը սատանայի է նման, քանդակագործը նրան խեղկատակի է վերածել, անարգում են մեծ հայի հիշատակը...



Այո՛, Հայաստանը քարի երկիր է, ունենք հրաշալի արձաններ՝ պատրաստված բազալտից, որոնք նույնպես մեծ էներգիա ունեն, կարող են մարդուն հոգեհարազատ դառնալ, բայց ո՞վ է ասել, որ բոլորը պետք է նույն կերպ տեսնեն աշխարհը, նույն կերպ մտածեն, նույն կերպ ստեղծագործեն, ինչո՞ւ ենք ուզում մերժել դրական հակադրումը (կոնտրաստը): Անպայման բացասաբար հակադրվելու կիրքը ինչո՞ւ այդքան ընդգծված է հայերիս մեջ: Հետաքրքիր է, այդ մարդիկ մոտիկից նայե՞լ են արձանին: Ես նայել եմ ու այն զգացողությունները, որոնք ստացա այդ գործից, կասկածում եմ, թե ինձ կփոխանցեր քարե, զգաստ արձանը: Նախ՝ դեմքը... Փարաջանովի դեմքը շատ պարզ ու իրական է, նրա աչքերի մեջ կարելի է նայել ու զգալ այդ մարդու վիթխարի ներուժը (էներգիան): Ինչ վերաբերում է դիրքին, նա իսկը փարաջանովյան է, նրա պես արտիստիկ, միշտ վեր սլացող, անհասանելիին թռչող...

Բամբաստողները արձանին համար օգտագործված նյութին էլ են անուն դնում: Նրանք կարծում են, թե Երևանում մետաղյա արձանները տեղ չունեն, թե դրանք գորշ են ու կոպիտ... Այ քեզ բա՛ն, այնքանով գործ ունեն, որ Մոսկվա կինոթատրոնի դիմաց տարիներ շարունակ կանգնած է հայտնի սարդը ու միշտ էլ մեկը կգտնվի, որ կհարցնի, թե ցուլն ո՞ւր կորավ, չէ՞ որ ցուլ էլ կար նույն տեղում: Ի դեպ, այդ ցուլն ու սարդն էլ Արա Ալեքյանի ձեռքի գործն են, ու եթե դրանք սև են, «գորշ», ապա ի՞նչ խնդիր կա չսիրելու գունավոր Փարաջանովին: Արա Ալեքյանի գործերը յուրահատուկ են այնքանով, որ ուղղակի դրվում են գետնին, պատվանդան չկա, կարելի է հանգիստ մոտենալ ու «շփվել» արձանի հետ, չէ՞ որ այն, ինչպես աշխարհում ամեն բան, մարդկանց համար է ստեղծված:

Եթե մենք շարունակենք այսպիսի վերաբերմունք ունենալ մեր արվեստագետների գործերի հանդեպ, դրանից ոչինչ էլ չենք շահի, ավելին՝ կկորցնենք: Արա Ալեքյանի մի շարք գործեր իրենց տեղը գտել են աշխարհով մեկ. օրինակ՝ Չեյաբիսկի քաղաքապետարանն ինքն է կապվել քանդակագործի հետ, ձեռք բերել գործերը,

Բրյուսելում կանգնած են վեբյանի 4 կոթողային (մոնումենտալ) երկաթե քանդակներ: Ի՞նչն է մեզ խանգարում գնահատել այն, ինչ ունենք, հպարտանալ դրանցով... Իհարկե մեր երկրում կա խոսքի ազատություն, կան համապատասխան հարթակներ, որտեղ յուրաքանչյուրը կարող է արտահայտել իր կարծիքը, բայց այն չպետք է ոտնահարի ստեղծագործելու ազատությունը: Չէ՞ որ մարդն արտահայտվում, արտաքին աշխարհի երևույթներին արձագանքում է ոչ միայն խոսքերով, այլև ստեղծագործելով:

Բարեբախտաբար կա նաև երկրորդ խումբը՝ մարդիկ, ովքեր անկեղծ հետաքրքրված են արձանի ճակատագրով: Նրանք այցելում են «Կինոյի տուն», հավանում և սիրում արձանը, լուսանկարվում «երկաթյա» Փարաջանովի հետ:



Արձանի բացման հանդիսությանը շատերն էին ներկա, հիմնականում արվեստի մարդիկ: Հաճելի էր հետևել, թե մարդիկ ինչքա՞ն հիացած էին նայում արձանին, իրար շնորհավորում: Սակայն ներկա էին նաև ուղղակի հետաքրքրված հայեր, արվեստի սիրահարներ և Փարաջանովի հիշատակը բարձր գնահատողներ: Հենց նրանց համար հայ արվեստագետը կարող է և պետք է շարունակի արարել նույնիսկ մահից ավելի քան երեք տասնամյակ ցեղ՝ իր անկասելի, հզոր երևակայության թռիչքներով:

Փարաջանովի կենդանության օրոք էլ, ցավոք, քչերն են նրան ընդունել ու սիրել այնքան, որքան հիմա: Նրան ընդունելու և սիրելու նախապայման է հասկանալ նրա արվեստը, հասկանալ նրա ավանդը, հասկանալ, թե ինչ էր նա ուզում ասել իր գործերը դիտողին, նա լինի հայ թե օտար: Ու եթե մենք իսկապես հարգում ենք Փարաջանովի վաստակն ու հիշատակը, չէ՞ք կարծում, թե պետք է ավելի լայնամիտ լինենք համարձակ, ազատ, յուրօրինակ արվեստի առաջ:

Ինչ խոսք, արժե վերջապես մեծարել հայի տաղանդը դեռ իր ստեղծագործելու

տարիներին, ոչ թե մեկ դար անց... Այդպես գուցե վերջապես կարողանանք առաջ նայել,
ոչ թե ափսոսալ անցյալի համար:

#

«Ծիլ» համայնքը սփիւռքահայ հովանաւորներու հիմնած **«Ամրոց»** ծրագիրի մէկ մասն է: Համայնքը կը միաւորէ շնորհաշատ պատանիներ եւ պարմանուհիներ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի տարբեր շրջաններէն: Նպատակն է զարգացնել անոնց կարողութիւնները զանազան բնագաւառներու, մասնաւորաբար լրագրութեան, մշակոյթի եւ արուեստի մէջ:

There are no comments yet.